

891.99  
U-37

Առ-154

Հայոց  
Ըն. Ա. Ա. Ա. 142



ԿՐԵՊԵՐԻՑ



91.99  
5-37

Թիֆլիս  
1906

Արմ.  
2-45982

891.99  
Մ-37

19 NOV 2010

2-45982 Երևան  
ՄԱՐԻԿ

# ԻՄ ԵՐԳԵՐԻՑ



Ա. ՄՈՒ

ՀԽԲ. № 20659

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան „ՀԵՐՄԱՆ“ Մադարեան փող. 5.

1907

(237)

18.09.2013  
MGS VON S.

42733

MG A

15-A303

DRUGA

H-PLATE

208



3603-82



W. J. H. T.

\* \*

Ես յետ նայեցի...

Տանջանքի ուղին բռնած միշտ անշեղ  
Առաջ գնալով, դէպի իմ հոգու  
Երազած վայրը կատարելութեան.

Ես յետ նայեցի գեռ տառապազին,  
Ամուր հաւատքով մութը ճեղքելով,  
Կրծքիս տակ պահած իմ սէրը բմբոստ...

Որքան բան էի ես զոհաբերել  
Այդ յամառ ու վառ, կատաղի սէրին,  
Որքան վայելքներ... կուրութեան ծոցուժ  
Իշխող զուր պարձանք, ծիծաղ, փառք ու փայլ...  
Ես յետ նայեցի...

Այնտեղ ամբոխը ատամները բաց,  
Ծանակում էր ինձ այնքան ոխերիմ  
Կանչում «մոլեսքանչ»...

Եւ ինձ թւում էր՝ թէ ես մի հպարտ,  
Շարունակ կանգուն, անվհատ, անդորր  
Հոգի եմ ազատ, որ չարախնդաց  
Ալգ վոհմակի դէմ հեզնում եմ նըտնց  
Ծիծաղն ու լուսանք, ճիչերն ու սուլոց...  
Եւ նորից գնում միշտ առաջ խիզախ,  
Միշտ բարձր հեռուն...

### ԽԵԼԱԳԱՐԻ ԵՐԳԸ

Ես աշխարհ եկայ.

Բայց ազատութեան ու ճշմարտութեան  
Տառապեալ ոգիք, արիւնոտ կեանքից  
Հալածուած գտայ վաղուց անարդուած.  
Եւ ես վշտացած առաջին անգամ,  
Երգեցի աղի կատարելութեան  
Երգը սրտառուչ մարդկութեան համար,  
Ու քրքնջացին նոքա թուլացկոտ,  
Ինձ անուանելով—«խղճուկ խելագար»...  
Ինձ թւաց՝ թէ իմ ուժեղ հաւատքից  
Ծնուած յոյսերն էլ, հոգուս աշխարհն էլ  
Խորակուեց արդեն ու այն օրուանից  
Ես էլ արցունքով ինձ անուանեցի—  
«Խղճուկ խելագար»...



### ՎԱՅ ԴՈՒՔ ՍԵԿ ԼԻՆԻՇ...

Վայ դուք սև լինիք ցիր ու ցան ասաղեր  
Որ իմ դէմ ապուշ ցոլում էք ներհակ,  
Որ այս տանջալի անքուն գիշերին,  
Զէք լսում տկար սրտիս հեկեկանք.

Ես ձեզ եմ գիմում իբրև յուսախաբ,  
Անսառակ երգիչ, սիրող մենակեաց,  
Ես ձեզ եմ գտնում ամենից հեռու  
Անըմբոնելի կեանքից հալածուած.

Վայ դուք սև լինիք որ մունջ, միալար  
Արցունք էք քամում խղճուկ աշերէս,  
Ու ինձ չէք ասում թէ ինչո՞ւ համար,  
Այս կէս գիշերին դեզերում եմ ես.

Ախ վճիտ ասաղեր, երնէկ թէ ես էլ  
Զեզ հետ ցոլայի այդ լուս գենիթում,  
Կամ ունենայի գեթ մի ջերմ ընկեր,  
Այս տաժանանքի անձուկ աշխարհում...



\*\*

Գիշեր է տաղառուկ.

Ու բաց դռնակից ներս թափւող աշնան  
Քամին իւր շաչով, երերում է թոյլ  
Լոյսը առկայծուն կիսավառ մոմի...  
Եւ լուս մենութեան այդ վշտի ժամին  
Հանդէս են գալիս ապշած ըստուերներ,  
Որ ցուրտ պատերին իմ շուրջը դանդաղ,  
Այնքան այլանդակ սողում են, դողում...  
«Գալիս է մահը» ասում եմ լքուած  
Այդ զարհուրանքի անմիտ գիշերին,  
Ու նորից հանգարտ լոյսը իմ առաջ,  
Փշում է ցնցում աշնան պաղքամին...  
Ու ինձ թւում է թէ այդ զուր մարող  
Լոյսի հետ իմի, մարում է նաև  
Իմ գիտակցութեան կայծը փայփայած,  
Ու սիրտս էլ եռուն, լալիկ ու լեցուն  
Ամենի սիրով տանջուած ու հիւծուած,  
Ամենից խռով սառում է, սոսկում...  
Ամենից հեռու մեռնում է կարծես:



\*\*

Ես շատ եմ լացել...

Ա՛խ մի օր առատ արցունք էր գալիս  
Իմ խեղճ աչերից, ախ այն օրերին  
Սիրոսս էլ զգայնիկ, բարկանալ գիտէր  
Անվախ ամենից.

Ես շատ եմ լացել այն անմիտ ու բիրտ  
Սիրոյ օրերին, երբ նէ չէր պաշտում  
Իմ հպարտ հոգու սէրը սառսուռն  
Ու յոյսը վհատ...

Ես շատ եմ լացել տեսնելով ինչպէս  
Նէ ինձ ուրացաւ այնքան դիմաչար,  
Դեռ նշաւակեց ողբերգը երդչիս,  
Ու յոսի ծաղրեց իմ սէրը յամառ...  
Ախ շատ եմ լացել...

Ու այժմ արդեն արցունք չէ գալիս  
Իմ խեղճ աչերից, այժմ թուլացկոտ  
Սիրոսս էլ աւերած, հեկեկալ գիտէ  
Եւ ուրիշ ոչինչ:



## ՏԻՌԻՐ ԶԱՄԱՆԱԼԻՒՆ

Ա՛խ այս երեկոյ որքան տիրագին  
Ապշած է դալար, գեղուն Զամանլին  
Սապֆիր երկնքի կամարի դէմ լուռ...  
Ա՛խ այս երեկոյ որքան խղճալի,  
Երկչու ու տաղառուկ նիրհում է թափծու  
Այդ վայրը կախարդ, մորմոքւում անլուր...  
Ա՛խ որքան տիսնւր...  
Միթէ ինձ նման մի գեղեցկութեան  
Ուժգին կարօտից հիւծում է անարդ,  
Միթէ ինձ նման աշխարհից ծածուկ  
Լալիս է մենակ...



\* \*

Այդ գիշեր կուրծքս ցաւում էր այրւում,  
Իբրև զգայնիկ մի ծաղիկ գարնան,  
Բիրտ օամիների շաչով մոլորուն,  
Պաղով սառսառնւն...  
Յուսախաբութեան այդ անտանելի  
Գիշերին դժինեմ էլ քուն չէր գալիս  
Խղճուկ աչերիս և ոչ աղօթում  
Շրթունքս գողգոջ.  
Մութ էր այդ խորունկ գիշերը ապուշ...  
Ու ես միայնակ մաշող ցնորքի  
Անեզը ծովում հառաչում էի  
Միայն նուազկոտ.  
Բաց պատուհանից հարևանունու  
Լուռում էր սուզը դաշնակի խօսուն,  
Ու սիրտս նրա շեշտերով յորջորջ  
Լցւում էր անցեալ երազ յուշերով,  
Ու հեկեկում էր երկար... ցաւազին...  
Ուհ... անմիտ ցնորք յուսահատական  
Որ վառում էր ինձ տենգային թափով,  
Ու ամեն գիշեր յիշեցնում էր ինձ  
Որ հալածանքից ծնուած եմ նորէն  
Ես հալածուելու և մենակ անյուշ  
Նահատակուելու, ազատ մաքերիս  
Յախուն հոսանքով...

\* \* \*

Ի՞նչու հեղնեցին...  
Չգիտեմ իրաւ, այն միայն զիտեմ,  
Որ ամեն անդամ եւս հանդիպելիս  
Նորանոր մարդկանց «ընկեր» կոչեցի.  
Միրեցի նրանց  
Ինչպէս կ'սիրեր միայնութեան մէջ  
Հիւծուած մի երգիչ ու նուիրուեցի  
Մի ողորմելի հաւատքով մոլի.  
Ուզեցի խօսել...  
Սակայն դիւային բիրտ կատակներով,  
Աճեղ քըքինջով, սիրտո ցաւեցըին  
Նոքա խենթացած...  
Ու այն օրուանից՝ ատեցի մարդկանց  
Հոգուս անէծքով, նորից մենացայ  
Մարող յոյսերով, այրող յոյզերով...  
Ի՞նչու հեղնեցին...



\* \* \*

Գարուն է գալիս.  
Օ՛որքան զուարդ ժպտում է նորից  
Պաղած բնութիւն, այս կախարդական  
Պայծառ օրերին.  
Գարուն է գալիս. ամենքին սիրով,  
Իւր անուշ շնչով յուզում է շոյում,  
Լսում է նորից նուազ, գայլայլիկ,  
Եւ ուրախական ծափեր ու ծիծաղ...  
Սակայն ինձ համար իզուր է գալիս  
Գարունն այդ գունատ, քանի որ հիւանդ  
Հիւծում եմ անոյժ, այսքան յուստհատ  
Այսպէս մենացած...  
Ինձ հարցնում ես թէ ի՞նչս է ցաւում,  
Որ առապում եմ այս անուշ պահուն.  
Դեռ հարցնում ես.  
Միթէ չգիտես որ ճնշուած ու լի,  
Ակամայ լուած հոգիս է ցաւում,  
Հոգիս է հիւծում...



\* \* \*

Ահա գալիս է ցնորքից վիժած,  
Խենթ ուրուների ժամը բօթաբեր,  
Ու մտքիս անհուն աշխարհում աղօտ  
Եռում են զարգանդ խելագար ուժեր.

Շուրջս դժոխքն է այլանդակ կեանքի,  
Ծնողը վշտի առանց երկունքի,  
Զայրացած հոգիս գերեզման է լի,  
Մխող կայծերի, զսպած արցունքի...

Սակայն ես ի՞նչու այսպէս ահաբեկ,  
Դեռ քամում եմ ցուրտ մրուրը կեանքի,  
Եւ հալածանքից կուած իմ հոգին,  
Ուզում է սիրել գեռ տառապազին.

ԱՌ հասկանում եմ... դեռ մատաղ եմ ես  
Իմ չարաճճի լուս դաւանանքով,  
Հասնում է արդեն երազ ապագան,  
Ու նրա համար շնչում եմ գօրով:



\* \* \*

Իմ սիրաը բաց է քուրիկ քո առաջ,  
Դատարկ ու սառած այս օրուան նման,  
Մի փնտրիր այնտեղ ոչ մի յոյս-հիւլէ,  
Բոլորը նահանջ գարնան հետ անցան...

Բայց մի օր այդտեղ կրակ էր վառւում,  
Մի մեծ աշխարհ կար ոյժ ու յոյզերով,  
ԱՌ այն կրակը մարեց իմ քուրիկ,  
ԱՌ այն աշխարհն էլ խորտակուեց զօրով.

Ու հիմա բաց է սիրաս քո առաջ,  
Դատարկ ու սառած այս օրուան նման,  
Մի փնտրիր իզուր, էլ ոչինչ չկայ,  
Էլ ոչինչ չկայ—Աստուած է վկայ:



Ս Ա Խ Տ Հ

Նէ էր իմ վկան,,.  
 Որ պատկառելի սիրով անուշիկ  
 Իմ վզին փարուած, երգում էր մոլի  
 Սուտը թունաւոր.  
 Ես նայում էի նէրա աչերում,  
 Ուր գաղտնի պահուած կեանքի սուտն էր լոկ  
 Խօսում մարդկային նենդաւոր հոգու  
 Սէրը ծաղրելի.  
 Եւ խղճում էի թէ ինձ, թէ նէրան,  
 Ու կեանքի սուտը իմ աչքերումն էլ  
 Ծածկում էր խաբուած հոգուս նզովը  
 Ու նորէն սիրում.



\* \*

Ուն այս կարօտի դառնագին ժամին,  
 Հիւծում եմ անզօր հեռու ամենից,  
 Ու հեկեկանքի սիրո չէ մնացել,  
 Արցունք չէ գալիս իմ խեղճ աչերից.

Այս լուռ կարօտի հոգեմաշ պահուն  
 Երբ մելամաղնոտ լոռում եմ սոսկում,  
 Անզամ տանջանքի ուրուն զայրագին,  
 Զէ յաղթահարում իմ յամառ հոգին.

Սեղմում եմ կուրծքն կոկիծով լեցուն,  
 Սակայն չէ պայթում այդ վանդակը չոր  
 Եւ ինձ թուռ է թէ վիշտս անանց,  
 Մի լաւերժական ժայռ է անկործան.


Ու գեռ սիրում եմ ես տառապագին,  
 Եւ գեռ կարօտում թուլացկոտ հոգով,  
 Պշտի գիշերին անչափ յուսահատ,  
 Դեռ ցնորւռում եմ իմ սիրով հպարտ:



\* \*

Եւ գիշեր է դեռ.

Ու նորից ըմբոստ հոգս ու հեկեկանք  
ձնշում են հոգիս,  
Կարիք, ցաւ ու գաւ, անէծք, անարդանք,  
Նորից խեղդում են հաւատքս մոլի.  
Եւ գիշեր է դեռ.  
Նորից ու նորից հուրսէր ու յոյսեր  
Շողում են անմիտ,  
Գդուանք ու կարօտ, համբոյր ու աչեր,  
Լոյս ու գեղութիւն, յուզում են հոգիս...  
«Յոլա կամ մարիք աստղ իմ դողդոջնւն...»  
Մենակ ու մերժուած մրմիջում եմ ես,  
Յամառ ցնորքի այդ մոայլ պահուն  
Ինձ այց են գալիս գողտրիկ երազներ  
Կատարելութեան... ու նուազում եմ...  
Բայց գիշեր է դեռ. ոչ ոք չէ ըզգում  
Լուռ տառապանքը իմ վեհ ու խորունկ,  
Ու գիշեր է միշտ ինձ համար անանց,  
Ոչ ոք չէ կոչում ինձ «խեղճ ու տանջուած»:



\* \*

Սիրում եմ երգել.

Սիրուն է երգը հնչում ականջիս,  
Երբ մեն ու տիուր երգում եմ անուշ  
Յաւահեղձ սրտիս աղի շեշտերով...  
Ու մանկութիւնից սփոփուում եմ ես  
Միայն իմ երգով.  
Եւ դեռ ինձ համար կեանք կայ, թէկ ոհ,  
Քանի երգում եմ այսպէս յուսահատ,  
Եւ դեռ ինձ համար մի յոյս կայ աղօտ,  
Որ ես կ'մեռնեմ ու չեմ մօռացուիլ:



3603 - 82

\* \*

Այն ջինջ գարունն էլ անցաւ՝ թողնելով  
Սրտիս տխրագին վառ յիշատակներ,  
Այն ջինջ գարնան հետ վարդի պէս դժոյն,  
Նէ էլ թառամեց մենակ ու անսէր.

Բայց որքան հպարտ, այն խեղճութեան մէջ  
Ես սիրում էի նէրան մենացած,  
Եւ որքան վեհ էր իմ տանջանքը լուս,  
Սիրոյս օրերի հոսանքի առաջ.

Նէրա մէջ էի զտնում ես մոլի  
Ընկեր ու յայսեր, հայրենիք ու սէր,  
Նէրա համբոյրով էի տոչորուում,  
Երդ ու երազով ձգտում դէպի վեր.

Երկինքը վճիտ, իմ սէրը անմիտ...  
Հանգարտ ու խորունկ հանգչում էին լուս,  
Այն կախարդական լուս գիշերներին  
Լոկ նէ չէր թիւրում մտքերս տիսուր...

Բայց գեղեցիկը շատ շուտ է խամրում  
Այլանդակութեան հայացքից մթին,  
Ա՛լի կոյսն էլ մոլոր շատ շուտ է զոհում  
Կեանքի նանրութեան, երդչի լի հոգին:

### ԳՆՈՒՄ ԵՐ

Գնում եմ վրդով, սիրտս լի, մոլոր,  
Մի սուրբ երազի յոյսերով շաղուն,  
Գնում եմ անկանգ, սակայն հոգեմաշ  
Տանջանքի ուղին դեռ չէ վերջանում.

Գնում եմ խղճուկ շարունակ առաջ,  
Ինքս էլ չգիտեմ թէ ինչու համար,  
Ոչ մի օգնութիւն, ոչ մի լոյս աղօտ,  
Սակայն գնում եմ յոգնած, միալճ...

Ուղին ձգւում է դեռ երկար, երկար...  
Ու ես դեռ յամառ գնում եմ դժիեմ,  
Ինքս էլ չգիտեմ թէ ուր եմ գնում,  
Ինքս էլ չգիտեմ թէ ուր կ'հանգչեմ:



Յ Ա Խ Շ

ՏԵՆԴԻ մէջ լոխի ու մելամաղձիկ  
Նէ ձեռքս սեղմեց իւր այրւող կրծքին  
Ու խեղճ աչերում փայլեցին իսկոյն,  
Զերմ արտասուրի շիթերը վերջին.

Նայեց աչքերիս կարօտով նուաղ,  
Ճմլող օրհասի այդ դառն ժամին,  
Մի քանի բոպէ և պիտի մարեր  
Իմ թունաւորած կեանքը ցաւագին.

«Ուհ որքան սառն է ըս ձեռքը սիրուն»—  
Շնչաց թախծոտ, ժպտաց սիրակեզ,  
Օ՛ նէ այդ մահու ժպտով խղճալի,  
Կարծես ինձ ասաց—«գեռ սիրում եմ քեզ...»:



\*  
\* \*

Ինձ ցաւը մաշեց

Այն ցաւն անողոք—որ լուռ ու հեղնող  
Հոգիս շեղել է ճգնում օրն ի բուն.

Ինձ ցաւը մաշեց

Երբ խեղճութեան մէջ հպարտ մենացած,  
Լալով անձկացած անիծում էի

Անմիտ ու խաւար կեանքը մարդկային...

Ինձ ցաւը մաշեց

Այդ յիմար կեանքի կոկիծն ու հարուած,  
Զինուած հիւանդոտ, թիւր ժամանակի  
Շանթերով ուժգին.

Քանզի միշտ անյաղիմ՝ ոչ մի նանրութեան  
Չէի զոհ բերում իմ ազատ հոգին,

Իմ հաւատն ամուր, իմ խիղճը հանդարտ...

Ինձ ցաւը մաշեց

Այն ցաւը ուժգին—որ վերջ ի վերջոյ

Սպանում է յամառ սիրող պօչտին:



ԱՆՀԱՆԳԻՍՏ ՈՒՐՈՒՆ

Ահա իւ առաջ կանգնած է լրուած,  
Այս մելամաղձիկ խաբուած աղջկայ  
Սառսռուն ուրուն, որին մնողոք,  
Ես յաւերժական հանգստավայրը  
Նեսեցի մոլար.  
Նէ լուռ անհանգիստ թուլացկոտութեամբ,  
Մութ աչերն աղւոր վրաս սկեռած,  
Հայցում է ինձնից փոխադարձաբար  
Գեթ մի շեղ հայցք.  
Այս սկ, խորն ընկած խաւար աչերում,  
Դողում են հանգարտ աղի արցունքի  
Վճիռ կայլակներ, խեղճ ու խոշտանգուած  
Հեկեկում է լուռ...  
Եւ զարհուրելի մոայլ անձկութեամբ՝  
Որպէս ոսկրացած գմնի խլվիկ,  
Մանգաղը ձեռքին, ահ ու սարսափով  
Կալանգում է իմ նենգաւոր հոգին,  
Ոյդ գիշերային մունջ ու այլանգակ  
Կմաղքը ձղճիմ, սոսկ ու սարսափի  
Դեգերող ուրուն.  
Ես ամօթահար՝ որպէս մեղապարտ  
Դողում եմ յուզուած, ուզում եմ հեռու  
Մեհանալ անգորը ու նորէն ծաղրել  
Սոսկումը նէրա.

Բայց նէ օրհնում է ինձ լուռ մորմոքով,  
Օրհնում է դարձեալ և գեռ սիրալի,  
Թուփիչ մըմունջով աղօթք է կարգում  
Իմ հոգու համար.

Եւ ես լալիս եմ...  
Զղջում եմ այդ սուրբ վեհութեան առաջ,  
Առաջին անգամ գարշում եմ անգութ  
Իմ մատաղ սրտից, ընկնում եմ գողգոջ,  
Ուզում եմ զրկել ժանտ վշտից մաշուած  
Ռաքերը նէրա և արտասուբով  
Ներումն աղերսել այդ միամտութեան  
Խղճալի զոհից...


Սակայն խորշում է ինչանից հեռու  
Եւ արագանյետ չքանում յանկարծ,  
Ու յետ չէ նայում անգամ լսելու  
Իմ հեկեկագին աղօթքը զզջման.  
Ես սթափւում եմ.

Տեսնում եմ նորից յաւիտենական  
Քնից արթնացած, արտասւում է նէ  
Իմ առաջ կանգնած.

Նորից զիմում եմ նէրան ընկճուած...  
Նորից փախչում է հոգեմաշ ուրուն.

Տիրում է շուրջս ցուրտ ու մութ համակ,

Մըսում եմ ապշած ես յուզումնալի,  
Սարսափ ու անձնւկ...  
Նորից գալիս է նահատակ կոյսի  
Այդ վտիտ ուրուն.  
Ու միշտ գալիս է լուռ գիշերներին  
Ուշ գիշերներին...



ՄԵՐ ԲԵՄԻ ՍԻՐԵԼԻ ԱՐՏԻՍՏՈՒՀԻ

Օր. Ա. Մ. Խիբարեանին

Ես քեզ յիշեցի այս ուշ գիշերին,  
Երբ շուրջս լուռ էր քնով համակուած,  
Ու ցուրտ անկողնում ջերմեռանգօրէն,  
Ես աղօթեցի քուրիկ քեզ համար.

Յիշեցի ինչպէս բարեկամաբար  
Զեռքս սեղմելով՝ առաջին անգամ  
Դու միայն սիրով ասուցիր ինձ «խեղճ»  
Ու «անյայտ տանջուած...»

Եւ իմ սառսոռուն հոգու էջերում,  
Վառեցիր մի սուրբ բայց տաժանական  
Արուեստի կրակ ու ինձ մղեցիր  
Նրա գժուարին ուղին տատասկուտ...

Դու վկայ եղար իմ տառապանքին,  
Ու գիտես ինչպէս խելայեղութեամբ  
Գնում եմ ընկած այն խորհրդաւոր  
Ուղին տակաւին, ուր այնքան անուշ,  
Բուրում է հպարտ արտիստի դափնին.  
Նիմֆա Վէստայեան՝ ...

Երդւում եմ թէ քո թէ Աստծոյ առաջ,  
Որ դեռ կ'զնամ մռայլ հրճուանքով

Իմ մէջ թագցրած քո յիշատակը  
Հուռ փայփայանքով... կ'զնամ՝ առաջ,  
Ու այնքան երկար մինչ պահնծայ խղճուկ  
Մեր բեմի մուղան։



\*\*\*

Իմ սիրածն անուշ, որ կորաւ անյուշ,  
Մօտեցաւ փարուեց լանջիս արցունքով,  
Նէ խեղճ ու կրակ, նէ սէր ու թախիծ,  
Նէ անէծք ու վիշտ, տանջալից սրտով  
Լացել սկսաւ.

Մենք մենակ էինք, անզուսպ նախտնձից  
Մեր գէմ արտասւող աշքերի առաջ,  
Մենք մեռնում էինք վեհ ու խելագար,  
Մեզ հետ հալ ու մաշ չարով խեղճացած  
Հոգոց հետ դժխեմ.

Եւ կոյսը անուշ, որ կորաւ անյուշ,  
Մերձ ի մահ փարուած լանջիս արցունքով,  
Գեռ խեղճ ու կրակ, գեռ սէր ու թախիծ,  
Գեռ անէծք ու վիշտ, տանջալից սրտով  
Լալիս էր, լալիս...



ՆԱ ԵՒ ԱՅ

I

Ես մենակ էի.

Բայց թւում էր ինձ՝ թէ մենակ չէմ ես,  
Քանզի սիրելի շնիկս փոքրիկ  
Յատակին ընկած գրկել էր ոտքս,  
Ապշած աչունքը հոգուս խօսակից,  
Լուս կարեկցանքով յառած աչքերիս.  
Ափսոս մունջ էր նա.

Ես սիրում էի այդ հաւատարիմ,  
Սյդ լուռ-ըզգայնիկ խեղճ բարեկամիս,  
Որին ակամայ անչափ զայրոյթով  
Ու զուր հաւատքով կոչում էի «Հուն».  
Տիսուր էր հոգիս.

Բայց հրձւում էի այդ անարգ մարմնով,  
Որ յիմարաբար ինձ էր նուիրուած  
Անպիտան սիրով խելայեղութեամբ...  
Ու թւում էր թէ նա մի սիրելի  
Մահ էր յուշ անում:



II

Ես մենակ չէի.

Բայց թւում էր ինձ՝ թէ մենակ եմ ես,  
Քանզի հանելուկ կինը իմ առաջ  
Շինծու մորմոքով գրկել էր թիս,  
Ու զոյգ աչերում գրուած էր սեով.  
Ամբողջ դժոխքը սոսկալի կեանքի.  
Ափսոս մարգ էր նէ.

Ես սիրում էի այդ փոփոխական,  
Դառն ու անըզզայ չքնաղ էակին,  
Որին ակամայ անչափ զայրոյթով  
Ու զուր հաւատքով կոչում էի «կին»  
Տիսուր էր հոգիս.

Ես տանջւում էի այն անարգ սիրով,  
Որ տածում էի գէպի նէ անգութ  
Կինը թունաւոր այնքան սիերիմ...  
Ախ թւում էր թէ նէ սի սոսկալի  
Մահ էր յուշ անում:



\* \* \*

Դու հարցնում ես՝ ի՞նչպէս եմ ապրել  
 Այս որդնած կեանքի պաղ գերեզմանում,  
 Եւ ինձ հետ ծնուած վիշտս սոսկալի,  
 Ալղքան անողոք հեգնում ես ծաղրում.  
 Ապրել եմ արդեօք... ինքս էլ չգիտեմ.  
 Սակայն դեռ երբէք ես տեղ չեմ գտել  
 Ոչ ոքի սրտում ու մանկութիւնից  
 Դեռ ուրախական ծիծաղ չէ փայլել  
 Իմ խեղճ աչերում.  
 Ես օդ եմ շնչել այն էլ թունաւոր,  
 Երկինք եմ տեսել միշտ էլ մոայլած,  
 Ինձ էլ եմ տտել ինչպէս ամենքին,  
 Աչքեր եմ տեսել միայն խոժոռած.  
 Եւ սակայն ի՞նչու աշխարհ ձգեցին  
 Ինձ իմ հեշտանէր ծնողներն անգութ,  
 Քանի որ այսպէս զգայուն եմ ես,  
 Ու անտանելի միստիկ յոյզերով...  
 Ո՛չ ես չէմ ապրել.  
 Երգել եմ միայն որքան հաւատով  
 Կարողացել եմ տանջանքից քամել  
 Եւ այդ երգերով ինքս ինձ օրնիբուն  
 Օրօր եմ ասել ու լացել, լացել...  
 Սակայն ես կապրեմ...

\* \* \*

Վարդը դալկացաւ, խղճուկ'... թառամեց,  
 Գարունն էլ անցաւ անմիտ ու նահանջ,  
 Ցուրտ քամի փչեց, նորից սառ ու ցաւ,  
 Նորից հեկեկանք, անէծք ու հառաչ...

Վարդը թառամեց... ափսնս դուր օրեր,  
 Սիրտս էլ զառամեց ձմռան հետ պաղած,  
 Նէ ինձ ուրացաւ, քնարս փոխեց  
 Ոսկու յաղթական փայլին շլացուծ.

Եւ այնուհետև ինձ մնաց անցեալ  
 Սիրային անանց յուշերը կրակ,  
 Մի զաղանի կարօտ, մի դժնի մորմոք,  
 Ու դառն աղօթքով մահու լուռ տենչանք:



ԻՄ ՎԱՐԴԻ

(Նուէր սիրելուս)

Ծաղկափնջի մէջ ճնշուած էր այն ալ  
կոկոնը դալու կ, սեղմուած անզօր,  
եւ թերթերը ցիր, ծալքերով փոշոտ,  
Դժգնյն... թուլացած...

«Պիտի թառամի»... ասացին վայրագ  
Նենդաւոր մարդիկ, երբ արդեն իրանց  
Դիւային շնչով ճմլիլ էին այն  
Կոկոնը մատադ.

«Պիտի թառամի»... ասացին նրանք  
Սառն ու անողոք և չարախնդաց  
Հեռացան անփոյթ.

Բայց ես այդ անհոտ ու սիրուն փնջից,  
Բնարեցի հենց այն ճնշուած ու խղճուկ  
Վարդը բուրալի ինձ համար գեղուն,  
Եւ խնամեցի քնքնյշ ու զգնյշ...

Նէ զուարդացաւ պարզ ու պաղ ջրում,  
Նէ թարմ ու ազատ օդում պերճացաւ,  
Անուշ բուրմունքով իմ կրծքին ապրեց  
Սիրոյս մայիսին, կրծքիս զառամեց...  
Կրծքիս թառամեց...



\* \*

Խոր լոռովեան մէջ մենք սորովալից  
Ու կարօտավառ, խանդաղատագին  
Գուշակում էինք ժպառւն ապագան,  
Եւ մեր յետագայ կեանքը նկարում  
Մտքներիս մէջ լուռ... սիրով իւենթացած...

Մենք յափշտակուած մեր անմիտ սիրով,  
Հրճուանքից նուազ լալ էինք ուզում,  
Երբ որ անջատման ժամը բօթարեր  
Կէս զիշերային երկուսը զարկեց.  
Երկու սիրավառ թութուագին սրտեր,  
Դողացին լըռուած ու հառաչեցին  
Այդ չարագուժկան, յանկարծահարող  
Զարկերի հետ ձեպ.  
Երկու զոյգ շուրթեր իրար միացան  
Դողով շորթելու համբոյը անջատման,  
Երկու զոյգ աչեր արցունքով ողող,  
Փայլեցին մոայլ թախծով համակուած...  
Եւ ընդհատուեցին հոգեշանթ ժամի  
Զարկերն յաղթական.  
Անդորր լոռովեան մէջ նորից անկանգ,  
Ճօճանակն հանդարտ իրար յետերից  
Ակսաւ խաղաղ զարկ ի զարկ ճօճալ  
Անդնւլ... միալմար...

«ԱՇԽ որքան կարձ է այս մութ ու խաւար,  
Այս խորհրդաւոր գիշերն անուշիկ,  
Որքան վաղանցուկ սուրբ Առտուածածին...) ...  
Հեծկտաց նէ խեղճ և բաժանուեցինք.  
Ուհ... դարձեալ մենակ...



\*\*\*

Եւ ես կ'մեռնեմ.

Ու լուռ օրհասում նէրա ջերմ կրծքին,  
Վերջին օրհնանքով ու աղերսանքով  
Կ'փակեմ կեանքի կտրօտ իմ աչքեր  
Մարած... խեղճացած...

Եւ ես կ'մեռնեմ. ու կմօռացուի

Իմ սիրաը մաշուած, իմ հոգին տանջուած,  
Մի կաթիլ արցունք միայն կմնայ  
Անըմբանեի նէրա աչքերից,

Ցուրտ հողակոյտիս տխուր յիշատակ.

Եւ ես կ'մեռնեմ. ու նոր զարունը

Նոր հրագոյրներով նէրան կ'վտուէ,

Ու նէ կմեռնի իբրև իմ մուսան,

Ու նէ կծնուի իբրև խաղալիք...

Ապերախտ գարնւն, ծաղրածու գարնւն,

Դու կփոռվես հանգիստ խորունկ,

Կմեռնին նաև երգերս աղի...

Ափսոս պօէտի լոիկ տառապանք.

Եւ ես կ'մեռնեմ.

Բայց երանի թէ խանդոտ մեռեալի

Հոգին սառսուն, կարենար գիտել

Ցետագայ կեանքը սիրելի կնոջ—

Սոսկալի կնոջ...



### ՆԵՐԱՆ ԱԼԲՈՄՈՒՄ

Ես էլ քոնքը չեմ,  
Դու էլ իմս չես,  
Սակայն քոնն ես դու,  
Բայց ես իմս չեմ:



\*\*

ԱՌ ցնցող կօշմար.

Ես մենակ էի այն մութ գիշերին  
Գերեզմանոցի խորունկ խաւարում,  
Ուր ազատութեան նահատակ հոգին,  
Մի քարի վրա նստած թուլացկոս  
Ողբում էր անմիտ՝ աշխարհը կարմիր.  
Նրան ներդաշնակ ցրտաշունչ քամին  
Սուլում էր ուժգին ու հեռու յիմար  
Դեռ պարում էին արեան բուրմունքով  
Մոլեզնած մարդիկ և արտասուրով  
Բնկնում չարահար.  
Սոսկալի մարդիկ... գեթ հանգէք այստեղ  
Ու մի ցաւեցնէք ախուր Արարչին,  
Նզնվք... ջնջուեցէք... կանչում էր ծերուկ  
Հոգին յուսահատ ու արտասուռմ էր  
Միալար հեծ-հեծ...



\* \*

Ես մենակ էի.

Հիւանդ ու հիւծւած դեռ կանչում էի  
 Այն ցուրտ էակին, որ խենթ հեշտանքով  
 Ծծեց իմ եռուն սրալից ամեն բան  
 Ու թշուառացըեց.  
 Սոսկում էր հոգիս այդ մենութեան մէջ,  
 Այնպէս թուլացկոտ... այնքան ցաւաղին...  
 Որ ինձ թւում էր թէ ոխն իմ սիրոյ  
 Մեռնում է ինձ հետ.  
 Եւ ոչ կեանք, ոչ մահ, ոչ նէ անողոք,  
 Ոչ ոք այդ պահուն ինձ այց չէր գալիս,  
 Ու խեղճ մրմունջով հեկեկում էի —  
 «Մայրիկ իմ մայրիկ»...



Ն Ո Ւ Ա Գ

Տիկնոջ Ասոյիկ Մարիկին

Մենք կ' գնանք անուբջների  
 Հայրենիքը լոյս, ազատ,  
 Մենք կ' վանենք մեր լի հոգուց,  
 Յաւ ու արտունջ՝ մեղ աւանդ.  
 Ու կ' շնչենք երազ երկրի  
 Զինջ ու պայծառ երկնի տակ,  
 Աղօթելով կ' մօռանանք,  
 Մութ անցեալի անարգանք.

Երբ կնիրնէ տապ արկը  
 Հրաժեշտ տալով աշխարհին,  
 Ես քեզ փարուած նորից կ' երգեմ,  
 Հին սիրային մեղեղին.

Եւ միասին մենք մենացած  
 Եւ կժպտանք ու կ' լանք,  
 Չէ որ մենք ենք այն երկուոր,  
 Որ ակամայ խեղճացանք:



\* \*

Ո՞չ երբէք մարդիկ չպիտ մօռացուին,  
Եթէ աշխարհ են զալիս ապրելու,  
Ուհ ինչ խենթութիւն ծնուել հաւատով,  
Բայց մեռնել անյուշ, հողն անարդելու.

Ո՞չ մարդիկ պիտի ապրին յաւիտեան  
Իրանց սրբազն գործի անունով,  
Եւ ով չէ գործում կեանքում հեղ, աննենդ,  
Իրաւունք չունի ապրելու երբէք:



Յ Ն Ո Ւ Ք

Ահա փրփրած ճղփիւնով զուլալ  
Յուզւում է մոլի Դէքեղը շաշուն,  
Ու ծղրտալով վազում է առաջ,  
Արտաքսուած ահեղքարքարուտ ձորից,  
Ունում են, վայում ճուփ-ճուփ ալիներ,  
Ականջներ տանող շաչ ու շառաչով,  
Եւ պաղ քամու հետ բամբ ու ներգաշնակ  
Մի աղիողորմ երգ են զուրգուրում,  
Ծեծկում են ուժզին ափերը ժեռուտ  
Միալար զարգանդ, զայրոյթով ըմբոստ,  
Ու լարուած-սևեռ հայացքս գերած  
Տանում են տանում...  
Եւ ինձ թւում է թէ արագավազ,  
Սյդ աղմկալի ալեաց հետ ի մի  
Գնում է և նէ, իւր հետ տանելով  
Հոգուս սուրբ սէրը, աղքատիկ կեանքիս  
Հիւլէ-յոյսերը...  
Թւում է թէ նէ զուժում է ինձ վիշտ,  
Անտանելի կեանք, տանջանք, սև օրեր,  
Արտասուք-յագնւրդ...  
Թւում է թէ նէ թողնում է ինձ խեղձ,  
Անսէր ու մոլոր լքուած դեգերել

Այդ մելամաղձիկ ջրի ափերին,  
Մեն-մենակ ու մունջ...  
  
 Եւ պաղ հեղնանքով ալեաց երեսին  
Որտես ջրային մի յաւերժանարս,  
Փափլիկ ձեռքերով ջուրը ծեծկելով  
Սահում է անփոյթ իմ աղատասէր  
Ֆարտունան հպարտ.  
  
 Նէ ծիծաղում է. ծաղրում է անյոյս  
Մեր ճիզր նանիր, ինձ ու ամենքին,  
Եւ գար ու գատարկ ամբողջ աշխարհին,  
Անձուկ աշխարհին, որտեղ ծաղրածու  
Կեանքը բնաւին չէ զուարճացնում  
Մարդկային հոգին, որտեղ շատ շուտ են  
Զառամում ցաւով, որտեղ չեն սիրում  
Սատուծոյ սիրով...  
  
 Ու խուսափում է ինձանից հապճեպ.  
Արդեն հազիւ հաղ տեսնում եմ նէրան  
Փոռած, փրփրած ջրի երեսին,  
Էլ չեմ նշմարում ինչպէս են ժպտում  
Նէրա վեր յառած աչերը հեղնող,  
Միշտ երելում է ալեաց երեսին,  
Ու քիչ է մնում որ անյետանայ.  
Եւ ես տիրում եմ...  
  
 Սուր ջղայնաբար կուրծքու ճմլտում  
Մի մելամաղձիկ խելայեղութեամբ,  
Ինձ թւում է թէ արդեն ցաւում է,

Արդեն հանգչում է անձկատծ հողիս  
Աշխարհից խոնջ...  
Ինձ թւում է թէ մեռնում եմ անյուշ  
Ես մօռացուելու:



ԻՄ ՎԵՐԳԻՆԵՐՆ

Ողջոյն իմ մանկեկ  
Որ աշխարհ եկար գու սուրբ ու սիրուն  
Աղօթք կարգալու իմ հոգուս համար,  
Ու հեծեծալու իմ երգը ցաւոտ  
Ճնշող յուշերով...

Ողջուժում եմ քեզ հայրական անչափ  
Հիացքի թափով, իմ արիւն դսարիկ  
Իմ փափլիկ դաւակ...

Ու ցանկանում եմ քեզ ազատ հոգի,  
Քեզ սէր ու տանջանք, քեզ գութ ու հաւատ...

Ապրիր իմ հրեշտանկ.  
Ապրիր տոկալով, բայց ոչ ինձ նման,  
Ինձ համար վաղուց կեանքն է գերեզման .,  
Աղօթիր Վերգօ և անյաղթ միան  
Կեանքի պայքարում:



\* \*

Ես մեծ մարդ էի...  
Կեանքի որդն էի ես մի ժամանակ  
Որ կրծում էի ամեն բան մոլի.  
Ինչ որ մաշելու անկարող էի, --  
Ինչ որ ինձ պիտի մաշէր ու մնար.  
Ու մեծ մարդ էի...  
Քանզի անհանգիստ կեանքի որդն էի,  
Ու կրծում էի, ծամում ու մշում  
Գերբնական ոյժով ամեն ամեն բան...  
Ու ծծում էի, ուտում ու մարսում  
Կատաղի թափով ամեն ամենքին...  
Եւ հրճում էի ես իմ մեծութեամբ,  
Իմ հաւատամքով, իմ դաւանանքնվ...  
Տիսուր է հիմա.

Ինձ թւում է թէ երազ է անմիտ  
Իմ գոյութիւնը լոկ մեռելութեան,  
Ու կարճ է կեանքը այսքան սիրելի  
Նոյնիսկ դառնութեամբ...



\* \*

Արիւն է հոսում...

Պատիւն է խօսում դու գերի իմ սիրտ

Կնոջ հրապոյը թմրած նուաղկուտ...

Հեզնիր սիրախօս բոսոր շուրթերի

Քնքոյշ օրօրով հանգիստը նանիր,

Հեզնիր և քնքոյշ զաւակի անուշ

Առաջին թովիշ ժպիտն ու արցունք

Եւ աղօթքն աղի մանկական հոգու...

Սթափուիր իմ սիրտ.

Ճակատագրական վայ ու արցունքի

Այս սկ օրերին, պոռնիկի սիրտն է

Միայն թուլացկոտ, ծաղրելի հանգիստ

Երագում պաղած...

Իսկ իմ մէջ որ ջերմ արիւնն է եռում


Անչափ զայրոյթի ոյժերով լեցուն,

Գնում եմ այնտեղ ուր հերոսը վես

Կուռում է հպարտ և ի սէր ազգի

Ըսկնում է անպարտ զի՞ւորի մահով,

Ժպիտը դէմքին...



ՀՀ Ազգային գրադարան



NL0350482

H APM.  
2-45982

ԳԻՆՆ Է ՅՈ ԿՐԹ

42433